

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ԶՆՆԱՐԿՈՒՄ

ՍԵՐՊԵՅ ՅԱԽՎԵՐԴՅԱՆ

ԳՈՐԻՍ ՏԵՂԱՆՎԱՆ ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Գորիսը Հայաստանի Հանրապետության հին քաղաքներից է տեղավորված Վարարական գետի գեղատեսիլ հովտում, շրջապատված և՛ անտառապատ, և ժայռոտ լեռներով: 1868 թ. ռուսական իշխանությունների վարչական նոր փոփոխությունների հետևանքով Ելիզավետապոլի (Գանձակ) նահանգի Ձանգեզուր ամենաընդարձակ գավառի կենտրոնի կառուցապատման աշխատանքները ժայռափոր Գորիս գյուղի դիմացի տափարակում սկսվել են 1870 թ.: Նորաստեղծ բնակավայրը կառուցվել է ռուսական քաղաքաշինության չափանիշներին համապատասխանող հատակագծով: Նոր բնակավայր—ավանը գավառային քաղաքի կոչում է ստացել 1904 թ. մարտին. «Սինիստրոների խորհրդի մարտի 4-ի Բարձրագույն հաստատումած վճիռով Գեորիս ավանը, որ Ձանգեզուրի գաւառի վարչական կենտրոնն է, վերափոխուած է գավառական քաղաքի նոյն անունով»:

Հնագիտական տեղեկությունները վկայում են, որ քաղաքի հիմնադրման տեղում գետահովտի տափարակում, եղել է հնադարյան բնակատեղի: Որոշ շենքերի հիմքերի փորման ժամանակ բացվել են դամբարաններ, գտնվել կավե և բրոնզե իրեր¹: Քաղաքի շրջակայքում հայտնաբերվել է նաև հնագույն դիակիզարան²:

Գորիս տեղանունը պարունակող թերևս հնագույն գրավոր հուշարձանը ուրարտական Ռուսա I թագավորի (735–714 թթ. Բ. ա.) Սևանի լճափին Ծովինարի սեպագիր արձանագրությունն է: Սեպագրագետ Հ. Կարազյոզյանը գտնում է, որ Ռուսա I-ի կողմից նվաճված և արձանագրության մեջ հիշատակված **Գուրիա** կամ **Գորիայա** երկիրը Գորիսն է:

Այդ կարծիքը կիսում է Վ. Գալսերյանը³: Ուրարտական սեպագրի Գուրիա երկրանվան բառամիջի **ու**–ն հետագա հայերենում կարող է դառնալ **ո** ինչպես **Տուշպա**–**Տոսպ** օրինակում: Գորիսի բարբառով գրական հայերեն միավանկ բառի մեջ եղած **ու**–ն հաճախ է դառնում **ո**, ինչպես **մուր**–**մոր**, **ծուխ**–**ծոխ**, **կուտ**–**կոտ** և այլն: Հետաքրքիր է, որ գորիսեցի տեղաբնակի **կուր**–**ուս**–**եցի** ինքնանվան մեջ **ու**–ն պահպանվել է:

Գորիս կամ Կյորես (ինչպես տեղացիներն են կոչում) բնակավայրը նտուրարտական պատմական սկզբնաղբյուրներում այլևս չի հիշատակվում: Այն հիշատակվում է միայն Բ. հ. XIII դարում Ստ. Օրբելյանի «Սյունիքի պատմություն» գրքին կցված հարկացուցակում: Բնակավայրի անվանումը Սյունիք նահանգի Հաբանդ գավառի մեջ հանդիպում ենք Գորայք ձևով, միջին մեծությամբ գյուղը Տաթևի վանքին տալիս էր 10 միավոր հարկ⁴:

Այլ Մարգարյանի կարծիքով Գորիս տեղանունը ծագում է Գորայքից. «Այսպիսով, որ **Գորիս** (< Գորես < Կորես) տեղանունն առաջ է եկել **Գորայք** տեղանվան **Գորայս** հայցական ձևից, ոչ մի կասկած չի հարուցում»:

Ավելի ուշ ժամանակներում Գորիս տեղանունը հանդիպում ենք տեղում կամ տեղացիների կողմից գրված ձեռագիր-հիշատակարաններում: Այդ ձեռագրերից ամենից հինը պատկանում է Բարսեղ երեցի գրչին և գրվել է 1625 թ.: Նրա գրչագիր Զարոգորքի հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ սայ ի երկիրս Չագածորու, ի գեաւոս որ կոչի Գորես...»⁹: Իսկ Գորիս մերօրյա գրելածնը թերևս առաջին անգամ օգտագործված է 1647 թ. գորիսեցի գրիչ Մովսեսի կողմից նորոգված ձեռագիր Ավետարանի չափածո հիշատակարանում.

«... Մովսես տրուպ զանարժանի:

Որ եմ բնական ի յերկրի,

Չագածորոյն ի Գորիսի»⁹:

Գեղամա երկրի Բարկիս ավանում 1657 թ. ընդօրինակված ձեռագրի Ավետարանում գրիչ Սարգիսը նույնպես հարկ է համարել շեշտել իր ծագումը «... ի գեղջեն Գորիսոյ»¹⁰:

Նոր ժամանակներում Գորիս-Կյորես բնակավայրը ուսումնասիրողների կողմից տարբեր կերպ է անվանվել: Հայր Ղ. Ալիշանը բնակավայրը կոչել է Կորես¹¹, Ռաֆֆին նշում է Կորիս¹², համանման ձևով է նշում նաև Սարգիս արք. Ջալալյանցը¹³, իսկ Սաղաքիա արք. Օրմանյանը՝ Կեօրես¹⁴: Ռուսական պաշտոնական փաստաթղթերում քաղաքն անվանվում էր Գերյուսի (Гериуси):

Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի հեղինակները թվարկում են Գորիս-Կյորես բնակավայրի պատմական աղբյուրներում օգտագործված շուրջ երեք տասնյակ անվանումներ, իրավագիտորեն նկատում, որ **Գորիս**-ի փոխարեն երբեմն օգտագործվել է **Ձանգեզուր** տեղանունը: Այնուամենայնիվ, հարկ է կատարել մի շտկում այն մասին, որ **Գորիսի** փոխարեն օգտագործվել է ոչ միայն **Ձանգեզուր**-ը, այլև ավելի ճշգրիտ մի մոտեցում է ցուցաբերվել օգտագործելով բուն **Ձանգեզուր** անվանումը: Գորիսը կամ նրա շրջակայքը բուն Ձանգեզուր է կոչվել այն պատճառով, որ Ձագեծոր գյուղը, որի անունից էլ հնչյունափոխվել ու ծագել է Ձանգեզուրը, եղել է վարարակն գետահովտի հյուսիսային մասում Գորիս բնակավայրի հարևանությամբ: Այդպես է վարվել, օրինակ, Փարեգին Նժդեհը՝ Սյունիքը բաժանելով 6 վարչական շրջանների, նշելով Կապանը և Սիսիանը, Գորիսի փոխարեն օգտագործելով **բուն Ձանգեզուր** տեղանունը¹⁵:

Գորիս-Կյորես տեղանվան բացատրության կամ ստուգաբանության փորձեր, անշուշտ, եղել են: Ստ. Մելիք-Բախշյանը միանշանակ գտնում է, որ այն չի ստուգաբանված¹⁶: Հայկական խորհրդային հանրագիտարանը ներկայացնում է որոշ ուսումնասիրողների այն կարծիքը, ըստ որի Գորիս տեղանունը կարող էր ծագել Ստ. Օրբելյանի կողմից Սյունիքի Հաբանդ գավառում հիշատակված Գորու կամ Գորայք գյուղանունից կամ էլ Գորիս քաղաքից 2 կմ արևմուտք գտնվող Կյուփեր կոչված տեղավայրի անունից¹⁷: Արտահայտվել են նաև կարծիքներ, ըստ որոնց Գորիս տեղանունն առաջացել է **գոր**-երի կամ **գորա**-ների ցեղանունից¹⁸. **Գոր** հիմքով տասնյակ տեղանուններ կան Հայկական լեռնաշխարհում, ահա դրանցից մի քանիսը Գորեք գավառ (չորրորդ Հայք), Գորենե քաղաք, գյուղական բնակավայրեր Գորեթ, Գորիսի, Գորիսան, Գորան, Գորեն, Գորաթ (Արևմտյան Հայաստան). Գոր հիմքով բնակավայրեր կան նաև Վրաստանում Գորի, Գորիսթավի: Եթե **գոր**-ը տոհմանուն է կամ ցե-

ղանուն, ապա այդ ցեղը բավարար հետք է թողել ողջ լեռնաշխարհում և ինչ—որ կերպ հիշատակված պիտի լիներ պատմական հին աղբյուրներում: Արդեն նշեցինք, որ Ալ. Սարգսյանը, ելնելով հայոց լեզվի հնչյունափոխության օրինաչափություններից, փորձում է ապացուցել, որ Գորիս տեղանունն առաջացել է **Գորայք**—ի հայցական **Գորայս** ձևից: Լեզվական այդ հնարավոր անցումն ավելի վաղ նկատել է Ս. Բարխուդարյանը¹⁹: Գորիսը Գորու կամ Կյուփեր տեղանունների հետ կապ չունի: Հաբանդ գավառի Գորու—Կյորու այսօր լքյալ գյուղի տեղադրությունը հայտնի է, գտնվում է Գորիս քաղաքից շուրջ երկու տասնյակ կիլոմետր հեռավորության վրա հարավ—արևելքում:

Գորայք տեղանունը ստուգաբանելու համար պետք է բաժանել **Գոր—այք** մասերի: **Այք** վերջավորությամբ տեղանուններ մենք հանդիպում ենք Ստ. Օրբելյանի վերը հիշատակված գյուղացուցական երկու **Անձկ—այք** (Հաբանդ գավառ), **Մարդակ—այք** (Ծղուկ գավառ)²⁰: **Այք**—ը տեղանվան նշանակություն ունեցող կամ էլ հոգնակիակերտ վերջածանց է: Այդ են վկայում նաև Հայք, Վայք, Տայք համահայկական հնչողության և նշանակություն ունեցող տեղանունները: Ամեն դեպքում Գորայքի հիմքում մնում է **գոր**—ը կամ բարբառային **կյոր**—ը (**կյոր—ես**):

Գորիս բառի բացատրությունը տակավին XIX դարի կեսերին փորձել է տալ Սարգիս արք. Ջալալյանը: Նա այցելել է Գորիս և տեղանունը հնչեցնում է Կորիս ու գրում. «Կորիսաձև գազաթք այսոցիկ լերանց ի հեռուստ բերեն զնմանութիւն բազմաթիւ կաթուղիկէից. յորոց և ընկալեալ է զանուն կորիս»²¹: Սարգիս արք. Ջալալյանը Գորիսը շրջապատող կոր, կամարածն (կորիսածն) լեռները կամ ժայռերը նմանեցնում է զմբեթների (կաթուղիկէից), որից և ծագեցնում է Կորիս—Գորիս տեղանունը: Անշուշտ ընդունելի է նրա մոտեցումը խնդրին, որ Գորիս—Կորիս տեղանունը կապված է աշխարհագրական գործոնի տեղանքի հետ, այլ ոչ թե թքնիկ ծագման՝ ցեղանվան կամ տոհմանվան հետ:

Ամեն դեպքում Գուրիա—Գորայք—Գորիս—Կորիս կամ Կյորես տարահունչ անվանումների հիմքում ընկած է **Գոր**—ը, **Կոր**—ը կամ բարբառային **կյոր**—ը: Բացառված չէ, որ տեղանվան բառահիմքը գալիս է հնդեվրոպական **գուեռ** (—g—er), **գուռո** (—g—or) կամ **գուռ** (—g—r) «լեռ» արմատից: Ըստ Գ. Յահուկյանի՝ հնդեվրոպական լեզուներից ալբաներենում այն պահպանվել է g—r «ժայռ», «քար», իսկ ռուսերենում ropa (**գորա**)՝ «լեռ», «սար» իմաստներում²²:

Նոր հայկազյան բառարանը տալիս է **կոր** արմատի բացատրությունը. «Կամարածն, թեքեալ, ի վայր կոյս խոնարհեալ, թիւր, ծուռ, սապատողն, ճանկաւոր»²³: Իսկ ահա Գորիս տեղանվան տեղաբնիկների **կյոր—ես** անվանման երկրորդ մասը **ես**—ը կամ **էս**—ը, «լինել», «կա» նույնպես հայտնի (ֆրանս. est, ռուս. есть, պարսկ. ast, գերմ. ist, անգլ. is) հնդեվրոպական արմատը կարող է լինել²⁴:

Այսպիսով ենթադրելի է, որ հնդեվրոպացի հայերը, ապրելով իսկապես ժայռոտ մի տեղանքում, բնակատեղիի վաղնջական «լեռ լինել» լեռնոտ, կյորես անվանումը հայերենի հեռավոր ժամանակներից կեյծ բարբառներից մեկի միջոցով հասցրել են մինչև մեր օրերը²⁵: Հակառակ տեղանվան գրականացված և ժամանակի ու բարբերի հետ փոփոխությունների ենթարկված անվանումների Գուրիա, Գորայք, Գորես, Կորիս, Գեորիս, Գերյուսի և այլ տեղանունը բարբառում անփոփոխ ու հստակ է հնչել Կյորես:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Մուրճ. Թիֆլիս, 1904, թիվ 4, էջ 182:
- ² Դամբարաններ են բացվել կամ հնադարյան իրեր են գտնվել «Տիգրան Մեծ» ռեստորանի տեղում, Սաշտոցի փողոցի թիվ 26 տան այգում. Ուղտաքերծի շրջակայքում, Բակունցի փողոցի հյուսիսային ծասում և այլն:
- ³ Տես Խնկիկյան Օ., Նորահայտ հուշարձան Գորիսում, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1981, 4, էջ 305–307:
- ⁴ Տես Կարազյոզյան Յ., Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), Երևան, 1978, 10, էջ 64–66:
- ⁵ Տես Գայսերյան Վ., Արգիշթե II–ի Սիսիանի արձանագրությունը, ԼՀԳ, Երևան, 1985, թիվ 6, էջ 78: Գ. Սանտալժյանի կարծիքով ասորական Ադադնիրարի 3–րդ թագավորի (802–795թթ. Ձ.ա.) Արաքսի ստորին հովտում գրաված Բաքանիսը Սյունիքի Հաբանդ գավառն է (տես Յոզսեփ վ. Սանտալժեան, Սսորեստանայ և պարսից սեպագիր արձանագրությունը, Վիեննա, 1901, էջ 45): Ասորական արքա Սարգոն 2–րդի (722–705թթ. Ձ.ա.) Ձ.ա. 714 թ. հայտնի արշավանքի ֆրանսիացի մեկնիչ Ֆ. Թյուրո–Դանթենի հաշվարկներից ելնելով ասորի զինվորներին կարելի է հասցնել մինչև Արաքսի ափը Սյունիքի սահմանները: Դա կտրականապես չի ընդունում և. Ադոնցը (տես և. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 357): Եթե ընդունենք, որ Սարգոնը Արաքսի կղզից իսկապես հասել է Սյունիք, ապա ասորական աղբյուրի հաղորդման համաձայն հեռավոր լեռները քաշված թշնամուն հետապնդող Սարգոնի զրաված Գուրուսուպա քաղաքը կարելի է նույնացնել Գորիս տեղանվան հետ Հետաքերքի է. որ Գուրուսուպայի հետ Սարգոնը գրավել էր նաև Կաբանի (Կապան) քաղաքը (տես Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 1981, էջ 28):
- ⁶ Տես Օրբելյան Սո., Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 400:
- ⁷ Մարգարյան Ա., Սի քանի տեղանունների ծագման մասին, ՊԲՀ, 1988, թիվ 4, էջ 124:
- ⁸ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժե դար, հ Բ, Երևան, 1978, էջ 187–188: Բարսեղ երեքը եղել է Հալիծորի հայտնի Հարանց Մեծ անապատի հիմնադիրներից մեկը, և նրա անունը հիշատակվում է Առ. Դավիթժեցու գրքում (տես Դավիթժեցի Առ., Պատմություն, Երևան, 1988, էջ 209–210):
- ⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժե դար, հ Գ, Երևան, 1984, էջ 260–261:
- ¹⁰ Նույն տեղում, էջ 775:
- ¹¹ Տես Ալիշան Ղ., Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 100:
- ¹² Տես Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964, էջ 337:
- ¹³ Տես Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Սեծն Հայաստան, Բ մաս, Տիֆլիս, 1858, էջ 309:
- ¹⁴ Տես Օրմանյան Ս. Ազգապատում, հ. Գ, Երևան, 2001, էջ 4018:
- ¹⁵ Տես Սիմոնյան Ա., Չանգեզուրի գոյամարտը 1920–1921թթ., Երևան, 2000, էջ 378: Գորիսը բուն Չանգեզուր է անվանվել նաև Սյունիքից հեռացող Անդրանիկին ուղղված երկրամասի գյուղացիության համագումարի շնորհակալագիր–դիմումի մեջ (տես «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1989, թիվ 2, էջ 84): 1783 թվականին իշխան Պոտոմկինին ուղղված նամակի տակ իր ստորագրություն է թողել նաև Գորիսում ապրող Հովսեփ Օհանյանը՝ ներկայանալով որպես Չանկազորի (Չազեծորի) մեկիք (տես Армяно-русское отношения в XVIII веку (сборник документов), Ереван, 1990, стр. 222):
- ¹⁶ Տես Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. Հակոբյան Թ., Մելիք–Բախշյան Սո., Բարսեղյան Յ., հ 1, Երևան, 1986, էջ 953:
- ¹⁷ Տես Հայկական սովետական հանրագիտարան, հ 3, Երևան, 1977, էջ 166:

- Մարգարյան Ալ., ԳԶՎ. աշխ., էջ 125: Այդ կարծիքը կիսում էր գրող Սերո խանգաղյանը: Նա միաժամանակ տալիս է Գորիս անվան բացատրության ևս մեկ տարբերակ, որ այն կարող էր ծագել Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի անունից... (տես խանգաղյան Ա., Հայրենապատում, գիրք Բ, Երևան 1981, էջ 170):
- ¹⁸ Տես Բարխուդարյան Ա., Դիվան հայ վիճագրության, ար. 2, Երևան, 1960, էջ 79:
- ²⁰ Տես Օրբելյան, էջ 339, 394:
- ²¹ Զալալեանց Ա., Ճանապարհորդություն ի Սեծն Հայաստան, մաս Բ, էջ 309:
- ²² Տես Առաքելյան Բ., Ձախուկյան Գ., Սարգսյան Գ., Ուրաոտու-Հայաստան, Երևան, 1988, էջ 154:
- ²³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Խ Ա., Երևան, 1979, էջ 1118:
- ²⁴ Հեղինակի բացատրությունն այս կետում ոչ մի դեպքում չի կարող համոզիչ լինել (խմբ.):
- ²⁵ Հայերենի հեռավոր ժամանակներից եկող Գորիսի բարբառի մասին հավաստում է Ալ. Մարգարյանը (տես Մարգարյան Ա., Գորիսի բարբառը, Երևան, 1975, էջ 4):

С. Азвердян

К ВОПРОСУ ЭТИМОЛОГИИ НАЗВАНИЯ ГОРИС

К этимологии названия Гориса обратили внимания несколько армянских исследователей. Выражались разные мнения. Предлагается новый подход: вывести название из диалектного Кер-ес (Կըր-ես), предполагая, что именно в нем сохранились корни древнейшего (индоевропейского) названия местности.

S. Hakhverdyan

SOME ISSUES ABOUT THE ETIMOLOGY AND THE MENTIONS OF THE NAME OF GORIS

Goris is one of the most ancient towns of Republic of Armenia. Having been founded in the second half of the 19th century it got the status of a provincial town in 1904 by the Russian authorities.

As a settlement Goris has a history of thousands of years. The researchers believe that the country of Goria, mentioned in the cuneiform records of the Ararat (Urartu) king Ruza I (735–714 BC) is Goris.

Stepanos Orbelyan mentions the name of Goris in the province of Syunik region as Gorayk and later it is presented with various transcriptions.

A group of Armenian scientists have paid a special attention to the etymology of name of Goris. Some of them have ascribed an ethnic origine to it, others have connected it with the geographical factor or just considered that it was not etymologized. In spite of the fact that the name of Goris has been mentioned through various transcriptions like Goria, Gorayk, Gores, Kons, Geryasy and so on, but it was pronounced Kyores in the local dialect without any changes.

An attempt of etymologizing the name Goris on the basis of the local dialect has been made, supposing that one of the most ancient dialect has saved its original roots (Indo-European) of the name of the country.